ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-819-16.04.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
«Հոդված 2. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները
1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.
1) պետական տուրք՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար կազմակերպություններից կամ ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար) Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար.
2) պետական տուրքի միասնական հաշիվ՝ սույն օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարողների հերթական տարեկան (օրենքով սահմանված դեպքերում՝ ամսական և եռամսյակային) պետական տուրքի գծով պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջետային հաշիվ.
3) պետական տուրքի միասնական հաշվի գումար՝ գումար, որով սույն օրենքով սահմանված կարգով կարող են մարվել պետական տուրք վճարողի հերթական տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունները, որը կարող է առաջանալ.
ա. պետական տուրքի միասնական հաշվին կատարված վճարումից,
բ. լիազոր մարմինների կողմից տրամադրված ճշգրտված տեղեկատվության հիման վրա կատարված վերահաշվարկից,
գ. իրավունքի, թույլտվության, արտոնագրի, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) կամ ծանուցված գործունեության դադարեցման դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կատարված՝ պետական տուրքի գումարների համամասնական նվազեցումից.
դ. օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում պարտավորության պակասեցումից
4) պետական տուրքի պարտավորություն՝ չվճարված պետական տուրքի եւ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժի գումար.
5) պետական տուրքի անձնական հաշվի քարտ՝ պետական տուրքի գումարների հաշվառման գրանցամատյան, որտեղ արտացոլվում են հերթական տարեկան պետական տուրքի գումարները, պետական տուրք վճարողի կողմից պետական տուրքի գումարները

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու (մասնակի վճարելու) հետեւանքով հաշվարկված տույժերի գումարները, պետական տուրքի գծով կատարված վճարումները, ինչպես նաեւ կատարված վճարումների հաշվին մարված պարտավորությունները:
6) Էլեկտրոնային անձնական հաշվի քարտ՝ ինքնաշխատ եղանակով վարվող *պետական տուրքի* անձնական հաշվի քարտ, բացառությամբ հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված դեպքերի, երբ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման հիման վրա կազմված եզրակացությամբ *պետական տուրքի* անձնական հաշվի քարտում կկատարվի պետական տուրքի պարտավորության փոփոխություն.
7) պետական տուրք վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը սույն օրենքով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ պետական տուրք վճարելու պարտավորություն.
8) լիազոր մարմին՝ լիցենզիա, թույլտվություն, իրավունք, որակավորման վկայական, *արտոնագիր,* ինչպես նաեւ ծանուցում ներկայացրած անձանց ծանուցման ենթակա գործունեություն իրականացնելու իրավունք տրամադրող *պետական կամ ենթակա պետական մարմին կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ*
9) էլեկտրոնային գրանցամատյան՝ լիազոր մարմինների կողմից վարվող միասնական գրանցամատյան, որում ներառված տեղեկությունները տրամադրվում են հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով, համապատասխան համակարգչային ցանցով, վեբ ծառայությունների միջոցով՝ լիազոր մարմինների եւ հարկային մարմնի միջեւ փոխհամաձայնեցված տեխնոլոգիական մեթոդներով եւ ձեւաչափով:»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 3-րդ հոդվածը:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում «կամ օրենքով սահմանված այլ հիմքերով» բառերից առաջ լրացնել «, կազմակերպության լուծարմամբ» բառերը:

Հոդված 4 . Օրենքի *6[1]-ին հոդվածում՝*
1. 1-ին մասի 1-ին կետում «օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաեւ» բառերից հետո լրացնել «կազմակերպության լուծարման եւ» բառերը:
2. 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝
«3) Եթե տարեկան պետական տուրք վճարողն իրավունքի, թույլտվության, արտոնագրի, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) կամ ծանուցված գործունեության դադարեցման համար դիմում է ներկայացնում լիազոր մարմին, եւ այդ դիմումը բավարարվում է հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո, ապա գործողության կամ ծանուցված գործունեության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) օրը կատարվում է հերթական տարեկան պետական տուրքի գումարի համամասնական նվազեցում (անկախ պետական տուրքի գումարի վճարման

հանգամանքից)՝ դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամիսների համար: Նվազեցվող գումարը հաշվարկելու համար հերթական տարեկան պետական տուրքի գումարը բաժանվում է 12-ի եւ բազմապատկվում դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամսվանից մինչեւ հաջորդ պետական տուրքի հաշվարկման ամսվան նախորդող ամիսների թվով: Եռամսյակային պետական տուրքի նվազեցվող գումարը հաշվարկելու համար դադարեցման օրը ներառող եռամսյակի պետական տուրքի գումարը բաժանվում է 3-ի եւ բազմապատկվում եռամսյակի՝ դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամիսների թվաքանակով:»

3. լրացնել նոր 3-րդ մասով հետեւյալ *բովանդակությամբ*՝

«3. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից դուրս գալու, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց (այդ թվում անհատ ձեռնարկատերերի եւ նոտարների) գործունեությունը որոշակի կամ անորոշ ժամկետով դադարեցնելու, սնանկ ճանաչելու դեպքերում հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման՝ մինչեւ սույն հոդվածով սահմանված՝ տարեկան պետական տուրքի վճարման պարտավորության դադարեցման հիմքերից որեւէ մեկի ի հայտ գալու օրը:»:

Հոդված 5. Օրենքի 34-րդ հոդվածի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասում «հայկական դրամով» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը «, ընդ որում հերթական տարեկան պետական տուրքի վճարում կատարելու ժամանակ սխալի առկայության դեպքում կիրառվում են հետեւյալ կանոնները.

1) վճարումն ըստ *պետական տուրք* վճարողի նույնականացնելու համար առաջնային է համարվում հարկ վճարողի հաշվառման համարը, այնուհետեւ՝ հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենը.

2) եթե վճարողը սխալմամբ վճարման հանձնարարականում, որպես պետական տուրք վճարող, նշել է այլ անձի, որի արդյունքում մարվել է այլ անձի պետական տուրքի գծով պարտավորությունը, ապա կատարված է համարվում այլ անձի պետական տուրքի գծով պարտավորությունը, իսկ գումարը վճարողին վերադարձման ենթակա չէ: Այս դեպքում վճարողը այլ անձի նկատմամբ ձեռք է բերում քաղաքացիաիրավական պահանջի իրավունք»:

Հոդված 7. Օրենքի 36.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 36.1. Պետական տուրքի պարտավորությունների հաշվառումը.

1. Պետական տուրքի միասնական հաշվին վճարված գումարների հաշվառման օր է համարվում դրանց՝ պետական տուրքի միասնական հաշվին մուտքագրման օրը:

2. Պետական տուրքի միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները մուտքագրվում են պետական տուրքի միասնական հաշվին՝ դրանց առաջացման օրով:

3. Հերթական տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած պարտավորության հերթականության, ընդ որում պետական տուրքի պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են տուրքի գումարները, այնուհետեւ՝ տույժերի գումարները, իսկ պետական տուրքի վճարման օրերը նույնը լինելու դեպքում տուրքերի գումարների մարումը կատարվում է պետական տուրք վճարողի կողմից ընտրված հերթականությամբ, իսկ այն դեպքում, երբ պետական տուրք վճարողի կողմից ընտրություն չի կատարվում, ապա մարումը կատարվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

4. Հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունների (տուրք, տույժ) հաշվառման համար հարկային մարմնում էլեկտրոնային եղանակով վարվում *են պետական տուրքի* անձնական հաշվի քարտեր՝ ըստ առանձին լիազոր մարմինների: *Պետական տուրքի անձնական հաշվի քարտի* ձեւը եւ վարման կարգը սահմանվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով, ընդ որում՝

1) սույն օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը,

2) սույն օրենքի 19.7-րդ եւ 19.8-րդ հոդվածներով սահմանված, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար նախատեսված պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը՝ այդ պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բացված առանձին *պետական տուրքի* անձնական հաշվի քարտում:

5. Հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացվում է բացառապես լիազոր մարմինների կողմից առցանց եղանակով տրամադրված՝ էլեկտրոնային գրանցամատյանում առկա տեղեկատվության հիման վրա: Լիազոր մարմինների կողմից օրենքով սահմանված գործունեության տեսակով զբաղվելու իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների (կամ ներդիրների) տրամադրման, ինչպես նաեւ ծանուցում ներկայացրած եւ հաշվառված անձանց մասին, ծանուցման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ նոր վայրում այդ գործունեությունն իրականացնելու համար ներկայացված ծանուցման հաշվառման մասին վճարման ժամկետների, ինչպես նաեւ տարեկան վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությունը առցանց եղանակով էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառելու կարգը սահմանում է Կառավարությունը: «Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվությունը տրամադրող լիազոր մարմին է հանդիսանում կազմակերպության պետական գրանցումն իրականացրած մարմինը:

6. Պետական տուրքերի պարտավորությունները եւ դրանց մարումները, ինչպես նաեւ պետական տուրքերի պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Վճարողի լուծարման դեպքում պետական տուրքերի մինչեւ

հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները եւ միասնական հաշվում առկա գումարներն անտեսվում են:
7. Պետական տուրքերի պարտավորությունները հաշվառվում են եւ (կամ) վերահաշվարկվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով, բացառությամբ սույն օրենքի 19.7-րդ, 19.8-րդ հոդվածներով սահմանված, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար նախատեսված պետական տուրքի պարտավորությունների, որոնք հաշվառվում են համապատասխան հայտարարության կամ տեղեկության ներկայացման օրով:
8. Մարված հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունների գումարներն արտացոլվում են գանձապետական եկամտային հաշիվներին դրանց մարման օրով, որից հետո գանձապետարանի կողմից մարված պետական տուրքի պարտավորությունների գումարների վերաբերյալ, ինչպես նաեւ վերահաշվարկի արդյունքում պետական տուրքի միասնական հաշվին վերադարձման ենթակա գումարների վերաբերյալտեղեկատվությունն ուղարկվում է ըստ առանձին լիազոր մարմինների:
9. Պետական տուրքի միասնական հաշվին կատարված վճարումները չեն համարվում պետական բյուջեի եկամուտներ եւ վճարներ, քանի դեռ դրանց հաշվին պարտավորություններ չեն մարվել:
10.Պետական տուրքի հաշվառման նպատակով հարկային մարմնում բացված էլեկտրոնային անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր օր առցանց եղանակով տրամադրվում է լիազոր մարմիններին:»:

Հոդված 8. Օրենքի 39-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝
«Հոդված 39. Պետական տուրքը վերադարձնելու կարգը.
1. Պետական տուրքի միասնական հաշվում առկա գումարները ենթակա են վերադարձման պետական տուրք վճարողին կամ հաշվանցման պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին պետական տուրք վճարողի կողմից հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած ձեւով եւ կարգով լրացված դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում: Պետական տուրքի միասնական հաշվից գումարների վերադարձն իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով *պետական տուրք* վճարողի բանկային հաշվին կամ հաշվանցում կատարելով պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին: Գումարի վերադարձը սույն մասով սահմանված ժամկետից 30 օրից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար պետական տուրք վճարողին վճարվում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0□03 տոկոսի չափով:
2. Պետական տուրքի այն գումարները, որոնք չեն հաշվառվում պետական տուրքի միասնական հաշվում.
1) վերադարձվում են այն բյուջեից, որին փոխանցվել է գումարը՝ ոչ ուշ, քան սույն մասով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, բացառությամբ

օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված տուրքի գումարների: Օդային տրանսպորտային միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված պետական տուրքը ֆիզիկական անձանց է վերադարձվում *Կառավարության* սահմանած կարգով:

2) վերադարձվում են *պետական տուրք* վճարողի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է համապատասխան ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում, ընդ որում՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացված ծառայությունների կամ գործողությունների համար գանձված պետական տուրքը վերադարձվում է գանձող մարմնի կողմից ընթացիկ ամսում գանձված պետական տուրքի այն գումարներից, որոնք օրենքով սահմանված կարգով դեռ չեն փոխանցվել պետբյուջե: Այս դեպքում կազմվում եւ *պետական տուրք* վճարողի դիմումին է կցվում նաեւ ակտ, որի օրինակելի ձեւը եւ պետական տուրքի վերադարձի փաստաթղթավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

բ. պետական տուրքը կամ նրա մի մասը վերադարձնելու մասին դիմում տալը կասեցնում է երեք տարվա ժամկետի ընթացքը:

գ. պետական տուրքը վերադարձնելու մասին դիմումին կցվում են Սահմանադրական դատարանի, վճռաբեկ, վերաքննիչ եւ առաջին ատյանի դատարանների եւ պետական տուրք գանձող մյուս մարմինների տեղեկանքները՝ պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, ինչպես նաեւ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակը գտնվում է պետական տուրքը գանձող մարմնի մոտ, ինչի մասին կատարվում է համապատասխան նշում պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին տեղեկանքում:»:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից եւ տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված՝ կազմակերպության լուծարման դեպքում պետական տուրքի պարտավորության դադարեցման դրույթի, որը տարածվում է նաեւ մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը լուծարված կազմակերպությունների վրա:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝ պետական տուրքի անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունները եւ գերավճարները չեն փոխանցվում նոր էլեկտրոնային անձնական հաշվի քարտ եւ շարունակում են հաշվառվել նախկին *պետական տուրքի* անձնական հաշվի քարտերում մինչեւ պարտավորությունների մարումը եւ (կամ) գերավճարի վերադարձը:

3. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝ պետական տուրքի անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունների, ինչպես նաեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նշված պարտավորությունների վրա հաշվարկված տույժերի մարման նպատակով վճարումները

կատարվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող համապատասխան հաշվեհամարներին:
4. Պետական տուրքի նոր էլեկտրոնային անձնական հաշվի քարտերում վարվելու են միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջացած պարտավորությունները եւ պետական տուրքի միասնական հաշվին կատարված վճարումները:
5. Պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմինների կողմից պետական տուրք վճարողին լիցենզիաների (թույլտվությունների, իրավունքների, արտոնագրերի, որակավորման վկայականների) տրամադրման (առաջին անգամ), ինչպես նաեւ լիցենզիայի կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձեւակերպման, այլ վայրում եւս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, գործունեության իրականացման թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրման, գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, գործունեության իրականացման թույլտվության վերաձեւակերպման, մրցույթների մասնակցության համար պետական տուրքի գծով վճարումները պետական տուրքի միասնական հաշվին չեն կատարվում եւ չեն հաշվառվում պետական տուրքի անձնական հաշվի քարտերում: Տվյալ դեպքում վճարումները կատարվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող հաշվեհամարներին:
6. *Օրենքի* 19.7-րդ եւ 19.8-րդ հոդվածներով սահմանված, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար նախատեսված պետական տուրքի գծով վճարումները կատարվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող հաշվեհամարներին:
7. Սույն օրենքի 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող *Օրենքի* 36.1-ին հոդվածի *3-րդ և 5-րդ մասերով սահմանված իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում*:
8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիազոր մարմինները Կառավարության որոշմամբ սահմանված ձեւաչափով առաջին անգամ էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառում են 2026թ. հունվարի 1-ի դրությամբ գործող (այդ թվում՝ կասեցված) բոլոր լիցենզիաների (կամ ներդիրների), իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, որակավորման վկայականների, ծանուցման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց համար պետք է հաշվարկվի հերթական տարեկան պետական տուրքի գումար:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-819-16.04.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) պետական տուրք՝ պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար կազմակերպություններից կամ ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար) Հայաստանի Հանրապետության պետական եւ (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար.

2) պետական տուրքի միասնական հաշիվ՝ սույն օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարողների հերթական տարեկան (օրենքով սահմանված դեպքերում՝ ամսական և եռամսյակային) պետական տուրքի գծով պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջետային հաշիվ.

3) պետական տուրքի միասնական հաշվի գումար՝ գումար, որով սույն օրենքով սահմանված կարգով կարող են մարվել պետական տուրք վճարողի հերթական տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունները, որը կարող է առաջանալ.

ա. պետական տուրքի միասնական հաշվին կատարված վճարումից,

բ. լիազոր մարմինների կողմից տրամադրված ճշգրտված տեղեկատվության հիման վրա կատարված վերահաշվարկից,

գ. իրավունքի, թույլտվության, արտոնագրի, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) կամ ծանուցված գործունեության դադարեցման դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կատարված՝ պետական տուրքի գումարների համամասնական նվազեցումից.

դ. օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի կատարման կամ բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման արդյունքում պարտավորության պակասեցումից

4) պետական տուրքի պարտավորություն՝ չվճարված պետական տուրքի եւ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժի գումար.

5) պետական տուրքի անձնական հաշվի քարտ՝ պետական տուրքի գումարների հաշվառման գրանցամատյան, որտեղ արտացոլվում են հերթական տարեկան պետական տուրքի գումարները, պետական տուրք վճարողի կողմից պետական տուրքի գումարները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու (մասնակի վճարելու) հետեւանքով հաշվարկված տույժերի գումարները, պետական տուրքի գծով կատարված վճարումները, ինչպես նաեւ կատարված վճարումների հաշվին մարված պարտավորությունները:

6) Էլեկտրոնային անձնական հաշվի քարտ՝ ինքնաշխատ եղանակով վարվող պետական տուրքի անձնական հաշվի քարտ, բացառությամբ հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված դեպքերի, երբ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի կամ

բողոքարկման հանձնաժողովի որոշման հիման վրա կազմված եզրակացությամբ պետական տուրքի անձնական հաշվի քարտում կկատարվի պետական տուրքի պարտավորության փոփոխություն.

7) պետական տուրք վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը սույն օրենքով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ պետական տուրք վճարելու պարտավորություն.

8) լիազոր մարմին՝ լիցենզիա, թույլտվություն, իրավունք, որակավորման վկայական, արտոնագիր, ինչպես նաեւ ծանուցում ներկայացրած անձանց ծանուցման ենթակա գործունեություն իրականացնելու իրավունք տրամադրող պետական կամ ենթակա պետական մարմին կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ~~պետական մարմին եւ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ~~

9) էլեկտրոնային գրանցամատյան՝ լիազոր մարմինների կողմից վարվող միասնական գրանցամատյան, որում ներառված տեղեկությունները տրամադրվում են հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով, համապատասխան համակարգչային ցանցով, վեբ ծառայությունների միջոցով՝ լիազոր մարմինների եւ հարկային մարմնի միջեւ փոխհամաձայնեցված տեխնոլոգիական մեթոդներով եւ ձեւաչափով:»:

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 3-րդ հոդվածը:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում «կամ օրենքով սահմանված այլ հիմքերով» բառերից առաջ լրացնել «, կազմակերպության լուծարմամբ» բառերը:

Հոդված 4 . Օրենքի 6^1-ին հոդվածում ~~61-րդ հոդվածում~~՝

1. 1-ին մասի 1-ին կետում «օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաեւ» բառերից հետո լրացնել «կազմակերպության լուծարման եւ» բառերը:

2. 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3) Եթե տարեկան պետական տուրք վճարողն իրավունքի, թույլտվության, արտոնագրի, լիցենզիայի կամ որակավորման վկայականի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) կամ ծանուցված գործունեության դադարեցման համար դիմում է ներկայացնում լիազոր մարմին, եւ այդ դիմումը բավարարվում է հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո, ապա գործողության կամ ծանուցված գործունեության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) օրը կատարվում է հերթական տարեկան պետական տուրքի գումարի համամասնական նվազեցում (անկախ պետական տուրքի գումարի վճարման հանգամանքից)՝ դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամիսների համար: Նվազեցվող գումարը հաշվարկելու համար հերթական տարեկան պետական տուրքի գումարը բաժանվում է 12-ի եւ բազմապատկվում դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամսվանից մինչեւ հաջորդ պետական տուրքի հաշվարկման ամսվան նախորդող ամիսների թվով: Եռամսյակային պետական տուրքի նվազեցվող գումարը հաշվարկելու համար դադարեցման օրը ներառող եռամսյակի պետական տուրքի գումարը բաժանվում է

3-ի եւ բազմապատկվում եռամսյակի՝ դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող ամիսների թվաքանակով:»

3. լրացնել նոր 3-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ~~խմբագրությամբ~~՝

«3. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից դուրս գալու, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց (այդ թվում անհատ ձեռնարկատերերի եւ նոտարների) գործունեությունը որոշակի կամ անորոշ ժամկետով դադարեցնելու, սնանկ ճանաչելու դեպքերում հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման՝ մինչեւ սույն հոդվածով սահմանված՝ տարեկան պետական տուրքի վճարման պարտավորության դադարեցման հիմքերից որեւէ մեկի ի հայտ գալու օրը:»:

Հոդված 5. Օրենքի 34-րդ հոդվածի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասում «հայկական դրամով» բառերից հետո լրացնել հետեւյալ բառերը «, ընդ որում հերթական տարեկան պետական տուրքի վճարում կատարելու ժամանակ սխալի առկայության դեպքում կիրառվում են հետեւյալ կանոնները.

1) վճարումն ըստ ~~հարկ~~ պետական տուրք վճարողի նույնականացնելու համար առաջնային է համարվում հարկ վճարողի հաշվառման համարը, այնուհետեւ՝ հանրային ծառայությունների համարանիշը, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ լիազոր մարմնի տրամադրած տեղեկանքի պատճենը.

2) եթե վճարողը սխալմամբ վճարման հանձնարարականում, որպես պետական տուրք վճարող, նշել է այլ անձի, որի արդյունքում մարվել է այլ անձի պետական տուրքի գծով պարտավորությունը, ապա կատարված է համարվում այլ անձի պետական տուրքի գծով պարտավորությունը, իսկ գումարը վճարողին վերադարձման ենթակա չէ: Այս դեպքում վճարողը այլ անձի նկատմամբ ձեռք է բերում քաղաքացիաիրավական պահանջի իրավունք»:

Հոդված 7. Օրենքի 36.1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 36.1. Պետական տուրքի պարտավորությունների հաշվառումը.

1. Պետական տուրքի միասնական հաշվին վճարված գումարների հաշվառման օր է համարվում դրանց՝ պետական տուրքի միասնական հաշվին մուտքագրման օրը:

2. Պետական տուրքի միասնական հաշվին մուտքագրման ենթակա գումարները մուտքագրվում են պետական տուրքի միասնական հաշվին՝ դրանց առաջացման օրով:

3. Հերթական տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած պարտավորության հերթականության, ընդ որում պետական տուրքի պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են տուրքի գումարները, այնուհետեւ՝ տույժերի գումարները, իսկ պետական տուրքի վճարման օրերը նույնը լինելու դեպքում տուրքերի գումարների մարումը կատարվում է պետական տուրք վճարողի կողմից ընտրված հերթականությամբ, իսկ այն դեպքում, երբ պետական տուրք վճարողի կողմից

ընտրություն չի կատարվում, ապա մարումը կատարվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

4. Հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունների (տուրք, տույժ) հաշվառման համար հարկային մարմնում էլեկտրոնային եղանակով վարվում են պետական տուրքի անձնական հաշվի քարտեր՝ ըստ առանձին լիազոր մարմինների: Պետական տուրքի անձնական հաշվի քարտի ~~Անձնական հաշվի քարտի~~ ձեւը եւ վարման կարգը սահմանվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով, ընդ որում՝

1) սույն օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը,

2) սույն օրենքի 19.7-րդ եւ 19.8-րդ հոդվածներով սահմանված, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար նախատեսված պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը՝ այդ պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բացված առանձին պետական տուրքի անձնական հաշվի քարտում:

5. Հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունների հաշվառումն իրականացվում է բացառապես լիազոր մարմինների կողմից առցանց եղանակով տրամադրված՝ էլեկտրոնային գրանցամատյանում առկա տեղեկատվության հիման վրա: Լիազոր մարմինների կողմից օրենքով սահմանված գործունեության տեսակով զբաղվելու իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների (կամ ներդիրների) տրամադրման, ինչպես նաեւ ծանուցում ներկայացրած եւ հաշվառված անձանց մասին, ծանուցման ենթակա գործունեության իրականացման վայրի փոփոխման կամ նոր վայրում այդ գործունեությունն իրականացնելու համար ներկայացված ծանուցման հաշվառման մասին վճարման ժամկետների, ինչպես նաեւ տարեկան վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությունը առցանց եղանակով էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառելու կարգը սահմանում է Կառավարությունը: «Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը եւ դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվությունը տրամադրող լիազոր մարմին է հանդիսանում կազմակերպության պետական գրանցումն իրականացրած մարմինը:

6. Պետական տուրքերի պարտավորությունները եւ դրանց մարումները, ինչպես նաեւ պետական տուրքերի պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Վճարողի լուծարման դեպքում պետական տուրքերի մինչեւ հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները եւ միասնական հաշվում առկա գումարներն անտեսվում են:

7. Պետական տուրքերի պարտավորությունները հաշվառվում են եւ (կամ) վերահաշվարկվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով, բացառությամբ սույն օրենքի 19.7-րդ, 19.8-րդ հոդվածներով սահմանված, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար նախատեսված պետական տուրքի պարտավորությունների, որոնք

հաշվառվում են համապատասխան հայտարարության կամ տեղեկության ներկայացման օրով:
8. Մարված հերթական տարեկան պետական տուրքի պարտավորությունների գումարներն արտացոլվում են գանձապետական եկամտային հաշիվներին դրանց մարման օրով, որից հետո գանձապետարանի կողմից մարված պետական տուրքի պարտավորությունների գումարների վերաբերյալ, ինչպես նաեւ վերահաշվարկի արդյունքում պետական տուրքի միասնական հաշվին վերադարձման ենթակա գումարների վերաբերյալտեղեկատվությունն ուղարկվում է ըստ առանձին լիազոր մարմինների:
9. Պետական տուրքի միասնական հաշվին կատարված վճարումները չեն համարվում պետական բյուջեի եկամուտներ եւ վճարներ, քանի դեռ դրանց հաշվին պարտավորություններ չեն մարվել:
10.Պետական տուրքի հաշվառման նպատակով հարկային մարմնում բացված էլեկտրոնային անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր օր առցանց եղանակով տրամադրվում է լիազոր մարմիններին:»:

Հոդված 8. Օրենքի 39-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝
«Հոդված 39. Պետական տուրքը վերադարձնելու կարգը.
1. Պետական տուրքի միասնական հաշվում առկա գումարները ենթակա են վերադարձման պետական տուրք վճարողին կամ հաշվանցման պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին պետական տուրք վճարողի կողմից հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացված՝ հարկային մարմնի սահմանած ձեւով եւ կարգով լրացված դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո՝ 20 օրվա ընթացքում: Պետական տուրքի միասնական հաշվից գումարների վերադարձն իրականացնում է գանձապետարանը՝ գումարը փոխանցելով պետական տուրք վճարողի բանկային հաշվին կամ հաշվանցում կատարելով պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին: Գումարի վերադարձը սույն մասով սահմանված ժամկետից 30 օրից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացած օրվա համար պետական տուրք վճարողին վճարվում է տույժ՝ վերադարձման ենթակա գումարի 0⍰03 տոկոսի չափով:
2. Պետական տուրքի այն գումարները, որոնք չեն հաշվառվում պետական տուրքի միասնական հաշվում.
1) վերադարձվում են այն բյուջեից, որին փոխանցվել է գումարը՝ ոչ ուշ, քան սույն մասով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, բացառությամբ օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված տուրքի գումարների: Օդային տրանսպորտային միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված պետական տուրքը ֆիզիկական անձանց է վերադարձվում Կառավարության ~~Հայաստանի Հանրապետության կառավարության~~ սահմանած կարգով:
2) վերադարձվում են պետական տուրք վճարողի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է համապատասխան ֆինանսական մարմին՝ պետական տուրքի կամ նրա մի մասը

վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում, ընդ որում՝

ա. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացված ծառայությունների կամ գործողությունների համար գանձված պետական տուրքը վերադարձվում է գանձող մարմնի կողմից ընթացիկ ամսում գանձված պետական տուրքի այն գումարներից, որոնք օրենքով սահմանված կարգով դեռ չեն փոխանցվել պետբյուջե: Այս դեպքում կազմվում եւ պետական տուրք վճարողի դիմումին է կցվում նաեւ ակտ, որի օրինակելի ձեւը եւ պետական տուրքի վերադարձի փաստաթղթավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

բ. պետական տուրքը կամ նրա մի մասը վերադարձնելու մասին դիմում տալը կասեցնում է երեք տարվա ժամկետի ընթացքը:

գ. պետական տուրքը վերադարձնելու մասին դիմումին կցվում են Սահմանադրական դատարանի, վճռաբեկ, վերաքննիչ եւ առաջին ատյանի դատարանների եւ պետական տուրք գանձող մյուս մարմինների տեղեկանքները՝ պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, ինչպես նաեւ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակը գտնվում է պետական տուրքը գանձող մարմնի մոտ, ինչի մասին կատարվում է համապատասխան նշում պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին տեղեկանքում:»:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից եւ տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված՝ կազմակերպության լուծարման դեպքում պետական տուրքի պարտավորության դադարեցման դրույթի, որը տարածվում է նաեւ մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը լուծարված կազմակերպությունների վրա:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝ պետական տուրքի անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունները եւ գերավճարները չեն փոխանցվում նոր էլեկտրոնային անձնական հաշվի քարտ եւ շարունակում են հաշվառվել նախկին պետական տուրքի անձնական հաշվի քարտերում մինչեւ պարտավորությունների մարումը եւ (կամ) գերավճարի վերադարձը:

3. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝ պետական տուրքի անձնական հաշվի քարտերում առկա պարտավորությունների, ինչպես նաեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նշված պարտավորությունների վրա հաշվարկված տույժերի մարման նպատակով վճարումները կատարվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող համապատասխան հաշվեհամարներին:

4. Պետական տուրքի նոր էլեկտրոնային անձնական հաշվի քարտերում վարվելու են միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջացած պարտավորությունները եւ պետական տուրքի միասնական հաշվին կատարված վճարումները:

5. Պետական տուրքի վճարումով ծառայություններ կամ գործողություններ իրականացնող մարմինների կողմից պետական տուրք վճարողին լիցենզիաների (թույլտվությունների, իրավունքների, արտոնագրերի, որակավորման վկայականների) տրամադրման (առաջին անգամ), ինչպես նաեւ լիցենզիայի կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձեւակերպման, այլ վայրում եւս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, գործունեության իրականացման թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակի տրման, գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, գործունեության իրականացման թույլտվության վերաձեւակերպման, մրցույթների մասնակցության համար պետական տուրքի գծով վճարումները պետական տուրքի միասնական հաշվին չեն կատարվում եւ չեն հաշվառվում պետական տուրքի անձնական հաշվի քարտերում: Տվյալ դեպքում վճարումները կատարվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող հաշվեհամարներին:

6. ~~«Պետական տուրքի մասին» օրենքի~~Օրենքի 19.7-րդ եւ 19.8-րդ հոդվածներով սահմանված, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար նախատեսված պետական տուրքի գծով վճարումները կատարվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող հաշվեհամարներին:

7. Սույն օրենքի 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող ~~«Պետական տուրքի մասին» օրենքի~~Օրենքի 36.1-ին հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով սահմանված իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում~~5-րդ մասով սահմանված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում~~:

8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիազոր մարմինները Կառավարության որոշմամբ սահմանված ձեւաչափով առաջին անգամ էլեկտրոնային գրանցամատյանում հաշվառում են 2026թ. հունվարի 1-ի դրությամբ գործող (այդ թվում՝ կասեցված) բոլոր լիցենզիաների (կամ ներդիրների), իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, որակավորման վկայականների, ծանուցման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց համար պետք է հաշվարկվի հերթական տարեկան պետական տուրքի գումար:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-819-16.04.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով «Պետական տուրքի մասին» օրենքի՝ (այսուհետ՝ Օրենք) նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է հետևյալ հասկացությունը. «պետական տուրքի միասնական հաշիվ՝ սույն օրենքով սահմանված դեպքերում պետական տուրք վճարողների հերթական տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական բյուջետային հաշիվ»: Միաժամանակ, Օրենքի 6.2-րդ հոդվածով սահմանված է, որ նույն օրենքով տարեկան պետական տուրքի վերաբերյալ սահմանված դրույթները կիրառվում են նաև ամսական և եռամսյակային պետական տուրքերի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենքով կամ չի հակասում ամսական կամ եռամսյակային պետական	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «տարեկան» բառից հետո լրացվել են «(օրենքով սահմանված դեպքերում՝ ամսական և եռամսյակային)» բառերը:	Ընդունվել է:

			տուրքերի վճարման հարաբերությունների էությանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «տարեկան» բառից հետո լրացնել «(օրենքով սահմանված դեպքերում՝ ամսական և եռամսյակային)» բառերը:		
2.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված 7-րդ հոդված 9-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանվում են «պետական տուրքի անձնական հաշվի քարտ» և «էլեկտրոնային անձնական հաշվի քարտ» հասկացությունները: Միաժամանակ, նախագծում տարբեր հոլովաձևերով կիրառվում է նաև «անձնական հաշվի քարտ» հասկացությունը: Նախագծում կիրառվող հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «վարվող» և «եզրակացությամբ» բառերից հետո, 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 36.1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունում «վարվում են» բառերից հետո և 2-րդ կետում «անձնական» բառից առաջ, նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «նախկին» բառից հետո լրացնել «պետական տուրքի» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «վարվող» և «եզրակացությամբ» բառերից հետո, 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 36.1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունում «վարվում են» բառերից հետո և 2-րդ կետում «անձնական» բառից առաջ, նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «նախկին» բառից հետո լրացվել են «պետական տուրքի» բառերը:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված է հետևյալ հասկացությունը. «լիազոր մարմին՝ լիցենզիա, թույլտվություն, իրավունք, որակավորման վկայական, ինչպես նաև ծանուցում ներկայացրած անձանց ծանուցման ենթակա գործունեություն իրականացնելու իրավունք տրամադրող պետական մարմին և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ»: Այս սահմանման արդյունքում «լիազոր մարմին» հասկացության մեջ չեն ընդգրկվում արտոնագրեր տրամադրող մարմինները: Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ ինչպես նախագծի, այնպես էլ Օրենքի գործող բազմաթիվ կարգավորումներ վերաբերում են նաև արտոնագրերին՝ առաջարկվում է «լիազոր մարմին» հասկացության մեջ լրացնել նաև «արտոնագիր» բառը: Միաժամանակ, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:»: Վերոնշյալ կարգավորումներից հետևում է, որ ենթակա պետական մարմինները նույնպես կարող են մատուցել պետական տուրքի գանձում նախատեսող ծառայություններ կամ կատարել համապատասխան գործառնություններ, հետևաբար՝ պետք է նաև հանդես գան որպես լիազոր մարմիններ: Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ առաջարկվում է «պետական	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «վկայական,» բառից հետո լրացվել է «արտոնագիր,» բառը, իսկ «պետական մարմին և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ» բառերը փոխարինվել են «պետական կամ ենթակա պետական մարմին կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ» բառերով:	Ընդունվել է:

			մարմին և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ» բառերը փոխարինել «պետական կամ ենթակա պետական մարմին կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ» բառերով:		
4.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում տեխնիկական վրիպակի շտկման նպատակով առաջարկվում է «61-րդ հոդվածում» բառերը փոխարինելով «6^1-ին հոդվածում» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածում «61-րդ հոդվածում» բառերը փոխարինվել են «6^1-ին հոդվածում» բառերով:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետում «խմբագրությամբ» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի կարգավորումները:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետում «խմբագրությամբ» բառը փոխարինվել է «բովանդակությամբ» բառով:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի	Հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով՝ առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի 36-րդ հոդվածում լրացվող 1-ին կետում «վճարումն ըստ» բառերից հետո «հարկ» բառը փոխարինել «պետական տուրք» բառերով, նախագծի 8-րդ հոդվածով Օրենքի նոր	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի 36-րդ հոդվածում լրացվող 1-ին կետում «վճարումն ըստ» բառերից	Ընդունվել է:

		6-րդ հոդված 8-րդ հոդված	խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 1-ին մասում «փոխանցելով» բառից հետո լրացնել «պետական տուրք» բառերը, 2-րդ մասի 2-րդ կետի առաջին պարբերությունում և «ա» ենթակետում «վճարողի» բառից առաջ լրացնել «պետական տուրք» բառերը:	հետո «հարկ» բառը փոխարինվել են «պետական տուրք» բառերով, նախագծի 8-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 1-ին մասում «փոխանցելով» բառից հետո լրացվել են «պետական տուրք» բառերը, 2-րդ մասի 2-րդ կետի առաջին պարբերությունում և «ա» ենթակետում «վճարողի» բառից առաջ լրացվել են «պետական տուրք» բառերը:	
7.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված	Նախագծում կիրառվող հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 36.1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունում «Անձնական հաշվի քարտի» բառերը փոխարինել «Պետական տուրքի անձնական հաշվի քարտի» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 7-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 36.1-ին հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունում «Անձնական հաշվի քարտի» բառերը փոխարինվել են «Պետական տուրքի անձնական հաշվի	Ընդունվել է:

				քարտի» բառերով:	
8.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում կիրառվում են «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը, մինչդեռ Նախագծի 7-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 36.1-ին հոդվածի 5-րդ մասում կիրառվում է «Կառավարությունը» բառը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ առաջարկում ենք միևնույն միտքը արտահայտելիս կիրառել միևնույն բառերը: Նախագծի 8-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինվել են «Կառավարության» բառով:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով արդեն իսկ սահմանված է, որ այսուհետ «Պետական տուրքի մասին» օրենքի անվան փոխարեն կիրառվելու է «Օրենք» բառը, հետևաբար առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «Պետական տուրքի մասին» օրենքի» բառերը փոխարինել «Օրենքի» բառով:	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «Պետական տուրքի մասին» օրենքի» բառերը փոխարինվել են «Օրենքի» բառով:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է միայն Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 36.1-ին հոդվածի 5-րդ մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետը, մինչդեռ	Ընդունվել է: Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասում «5-րդ մասով սահմանված	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 9-րդ հոդված	սահմանված չէ նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 36.1-ին հոդվածի 3-րդ մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասում «5-րդ մասով սահմանված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում» բառերը փոխարինել «3-րդ և 5-րդ մասերով սահմանված իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում» բառերով:	Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում» բառերը փոխարինվել են «3-րդ և 5-րդ մասերով սահմանված իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում» բառերով:	
11.	ՀՀ կառավարություն	«Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով «Գործունեության իրականացման ծանուցման մասին» 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասով սահմանվում է, որ լիազոր մարմինները հաշվառված անձանց մասին տեղեկատվությունը, դրանցում կատարված փոփոխությունները, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը կասեցնելու կամ դադարեցնելու, նոր վայրում գործունեություն իրականացնելու մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի դրույքաչափերի և տարեկան վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ ծանուցման ենթակա գործունեության հաշվառման, փոփոխությունների կատարման, իրավունքի դադարեցման, կասեցման, նոր վայրում գործունեության հաշվառման օրը առցանց եղանակով ներկայացնում են պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասում «օրը» բառից առաջ լրացնել «հաջորդ» բառը:	Ընդունվել է:

			վերահսկողությունն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին: Առաջարկվում է նշված մասում տեղեկատվության փոխանցման համար ժամկետ սահմանել ոչ թե այդ օրը, այլ հաջորդ օրը, հետևաբար, նշված մասում «օրը» բառից առաջ լրացնել «հաջորդ» բառը:		
12.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածում լրացվող 8.1-ին մասում տեխնիկական վրիպակի շտկման նպատակով առաջարկվում է «61-րդ հոդվածով» բառերը փոխարինելով «6^1-ին հոդվածով» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով ՀՀ հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածում լրացվող 8.1-ին մասում «61-րդ հոդվածով» բառերը փոխարինվել են «6^1-ին հոդվածով» բառերով:	Ընդունվել է: